

2013թվականի ~~հունիսի~~ 13-ին ժամը 14⁰⁰-ին տեղի ունեցավ Արմավիրի մարզի
Զրաշենի գյուղական համայնքի ղեկավարի 2013թվականի աշխատանքային
գործունեության կիսամյակային հաշվետվության հաշվետու ժողովը, որին մասնակցում էին
ավագանու 5 անդամները, համայնքի շուրջ 43 բնակիչներ, համայնքի ղեկավարի
աշխատակազմը, Արմավիրի մարզպետարանի աշխատակից Հովհաննես Պետրոսյանը:

Օրակարգում

1. Զրաշեն համայնքի ղեկավարի 2013թվականի 1-ին կիսամյակի աշխատանքային գործունեության
հաշվետվությունն էր:

Լսեցին- Զրաշեն համայնքի ղեկավարի 2013թվականի 1-ին կիսամյակի կատարած աշխատանքների
մասին, ելույթ ունեցան համայնքի բնակիչներ, ավագանու անդամներ: Քննարկվեցին համայնքի
հիմնահարցերը, քառամյա ծրագրի գերակա ուղղությունները: Որպես համայնքի հիմնախնդիր կարևորվեց
դպրոցի հիմնանորոգման հարցը:

Ժողովի նախագահ՝
Քարտուղար՝



Բարսեղ Գրիգորյան

Խ. Ղավթյան

Գ. Սարտիրոսյան

2013թվականի
~~հունիսի~~ 13
Գ.Զրաշեն

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով շուրջ 120անգամ հանդես են եկել տարբեր միջնորդություններով ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Արմավիրի տարածքային ստորաբաժանումում, Արմավիրի անձնագրային բաժանումում, նոտարական գրասենյակում, Արմավիրի ՏԶԿ-ում, ոստիկանության Արմավիրի բաժնում, մարզպետարանում և այլ կազմակերպություններում:

Կատարել են համայնքի շուրջ 120 բնակիչների ընդունելություն, քննարկել շուրջ 70դիմում, որոնցից 50-ին էլ տրվել է դրական լուծում, հրավիրել և վարել են ավագանու 4 նիստ, որի արդյունքում ընդունվել է 8 որոշում, արձակել են 10 կարգադրություն և ընդունել 12 որոշում:

Համայնքի բնակիչներին տրամադրվել է 200 տեղեկանք տարբեր կազմակերպություններ ներկայացնելու համար, աշխատակազմի հետ համատեղ կատարել ենք անասնազլխաքանակի հունվարյան հաշվառման, բնակչության սեռատարիքային հաշվառման, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում ցանքատարածությունների տարեկան հաշվառման աշխատանքները, կազմակերպել են համայնքի գրքերի, գործավարության մատյանների, տարբեր բնույթի հաշվետվությունների, տեղեկությունների, հաշվապահական հաշվառման և այլ փաստաթղթերի կազմման և վարման գործընթացը:

Օժանդակել և անհրաժեշտ փաստաթղթեր են տրամադրել համայնքի բնակիչներին տարբեր ֆինանսական կազմակերպություններից և բանկերից վարկեր ստանալու նպատակով:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համայնքի ավագանու հաստատմանն են ներկայացրել Զրաշենի գյուղական համայնքի 2013թվականի բյուջեն, աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Հանդես են եկել տարբեր բանկերում և վարկային կազմակերպություններում կարկուտից տուժած բնակիչների վարկերի վճարումները 1-ից 2 տարի երկարացնելու համար:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Աջակցել են գարնանային զորակոչին, զինկոմիսարիատից ստացված բոլոր ծանուցագրերը հանձնվել են հասցեատերերին, զինկոմիսարիատի հետ համատեղ իրականացրել ենք միջոցառումներ հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների գտնվելու վայրը հայտնաբերելու ուղղությամբ:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕՁՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Կազմել և համայնքի ավագանու հաստատմանն են ներկայացրել համայնքի հողային հաշվեկշիռը, իրականացրել են համայնքի վարչական տարածքում հողերի ընթացիկ հաշվառումը:

Աշխատակազմի միջոցով վերահսկողություն ենք իրականացրել համայնքի սեփականություն հանդիսացող հողերի, ֆիզիկական անձանց պատկանող հողերի պահպանմանը, նպատակային օգտագործմանը, մատուցվել է մասնագիտական-խորհրդատվական ծառայություն:

Անմիջական վերահսկողություն են սահմանել համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ և շարժական գույքի պահպանման նկատմամբ, կազմակերպել դրանց հաշվառման և գույքագրման աշխատանքները, կազմել համապատասխան փաստաթղթերը և ներկայացրել համայնքի ավագանու հաստատմանը:

ԿՈՍՈՒՄԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Առևտրի և սպասարկման ոլորտում իրականացրել ենք համայնքում գործող երկու առևտրային կետերի սպասարկման, ապրանքների, սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման հետ կապված ստուգումները:

ԱՌՈՂՋԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Կազմակերպչական հարցերով աջակցել են համայնքի միջնակարգ դպրոցի բնականոն գործունեությանը, հետամուտ են եղել, որ ոչ մի երեխա դուրս չմնա դպրոցից՝ իրենց և ծնողների հետ տանելով բացատրական աշխատանքներ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Կատարել են համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի հողային հաշվեկշռի կազմման աշխատանքները, համագործակցելով Արմավիրի մարզպետարանի և կադաստրի Արմավիրի տարածքային ստորաբաժանման հետ:

Մատուցել ենք մասնագիտական-խորհրդատվական ծառայություն համայնքի հողօգտագործողներին բույսերի ճիշտ մշակման, հիվանդությունների դեմ պայքարի, ոռոգման ժամկետների և եղանակների գործընթացում:

2013թ մայիսի 12-ի կարկտահարությունից հետո հանդես են եկել տարբեր կազմակերպություններում կարկտահարությունից տուժած հողօգտագործողներին աջակցություն ցուցաբերելու համար:

Կարկտահարությունից հետո Արմավիրի մարզպետարան է ներկայացվել կարկտահարությունից տուժած 177 հողօգտագործողների ցուցակը և հողատարածքները: Համայնքի 150 հողօգտագործողներին տրամադրվել է կառավարության կողմից տրամադրված սերմերը՝ արևածաղիկ, եգիպտացորեն, լոլիկ, վարունգ, ծմերուկ:

Կառավարության կողմից տրամադրած 2500 լիտր դիզ-վառելիք, տրամադրվել է կարկտահարությունից տուժած 68 հողօգտագործողի:

Կարմիր խաչ բարեգործական կազմակերպության կողմից օգնություն է տրամադրվել 38 ընտանիքի: Կառավարության կողմից 50000դրամ օգնություն են ստացել 24 ընտանիք: ԳՄԱԿ-ի աշխատակիցների հետ միասին կազմակերպվել է խորհրդակցություն կարկտահարված այգիները շուտ վերականգնելու համար: 55 ընտանիքի տրամադրվել է էկո-գել աճի խթանիչ սեղանի խախողի արագ վերականգման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆՂԻՐՆԵՐ

Համայնքի հիմնախնդիրներն են՝

- Դպրոցի հիմնովին նորոգում
- Կուլտուրայի տան վերանորոգում
- 4-րդ փողոցի խմելաջրի նոր ջրագծի անցկացում

13 հուլիսի 2013թ.

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ:



Handwritten signature

Խ.ԴԱԿԹՅԱՆ

ՀԱՎՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՈՒԹՅՈՒՆԻ

2013 թվականի ~~հունիս~~ ^{հունիս}ի 13ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զրաշենի գյուղապետարանում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողով: Ժողովին ներկա էին մարզպետարանից Հ. Պետրոսյանը, գյուղապետարանի աշխատակիցները և համայնքի թվով 43 բնակիչներ:

Համայնքի բնակիչները տարաբնույթ հարցեր բարձրացրեցին.

Բնակիչներին անհանգստացնում է համայնքի որոշ փողոցների և ճանապարհների ամբարեկարգ վիճակը և ցանկանում են որպեսզի համայնքի բոլոր փողոցները ապահովված լինեն գիշերային լուսավորությամբ:

Դժգոհություններ եղան նաև կապված հողերի կարգերի ոչ ճիշտ գնահատման հետ:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց 2013թվականի ընթացքում կատարված աշխատանքները, խոսեց հետագա ծրագրերի մասին, պատասխանեց համայնքի բնակիչների հուզող հարցերին.

Նա հայտնեց, որ գյուղապետարանի համար նույնպես առաջնահերթ են համարվում այն աշխատանքների իրագործումը, ինչպիսիք են խմելու ջրագծերի անցկացումը, փողոցների և ճանապարհների բարեկարգումը, գիշերային լուսավորության անցկացումը: Համայնքի մշակութային կյանքը աշխուժացնելու նպատակով կկազմակերպվեն միջոցառումներ:

Համայնքի ղեկավարը հայտնեց որ ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքներ կկատարվեն:



Handwritten signature

Խ. Դավթյան

Գ. Մարտիրոսյան